ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**24.02.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/9 գնման պայմանագրի**

ք. Երևան «23» «06» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Աղդայյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ Կատարող), երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.02.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.6 կետը և **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

*1. Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

**1.1** Պայմանագրով սահմանված ***Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի թիվ 180, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 88 և Կենտրոն վարչական շրջանի թիվ 4, թիվ 14 դպրոցների տարածքներում մարզադաշտերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների*** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտի փող. 1 | ք. Գավառ, Ազատության 35/33 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| ՀՀ 900012410032 | Հ/Հ 1150003420770721 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 08420977 |
| Վ. Պապիկյան ------------------ (ստորագրություն) Կ.Տ. | Վ. Աղդայյան ------------------ (ստորագրություն) Կ.Տ. |

BANK
AMIO

N 44-277

«22» 06 2026թ.

**Բենեֆիցիար՝** Երևանի քաղաքապետարան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի օգտին՝ Երևանի քաղաքապետարանի հետ 24.02.2026թ. թիվ N ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-26/9 պայմանագրով «ՇԻՆ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 23.02.2026թ.-ին թողարկված 800,000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով թիվ 44-071 պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի գործողության ժամկետը համարում ենք երկարաձգված մինչև 18.12.2026 (տասնութը դեկտեմբերի երկու հազար քսանվեց) թվականը ներառյալ:

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Ավան» մ/ճ-ի կառավարիչ՝ Լ.Հայրապետյան